9(47.925)

ԿՈՐԻՒՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՍՐԲՈՅՆ ՄԵՍՐՈՊԻԱՆՑ

Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի Տպարանի Մխիթարեանց

ՌՃԾԳ — 1854

Հ/Ս 3-2

27133-к.2

386-42

ЛЬВОВСКАЯ ОБЛАСТНАЯ
Гос. Библиотека
ZUUR-Арм ССР
им. В. Маяковского
в Ереване

6109-57

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎԱՐՈՒՑ ԵՐԱՆԵԼԻՈՅ ՅՈՒՐՔ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՄԵՍՐՈՎԲԱՅ

ԶՈՐ ԱՍԱՑԵԱԼ Է

ՆՈՐԻՆ ԱՀԱԿԵՐՏԻ ԿՈՐԵԱՆ

ԶԱՍՔԱՆԱՉԵԱՆ ազգին և զՀայաստան աշխարհիս զաստուածատուր շնորհս, զգրոյն գիւտ, և ըզվարդապետութեանն պարգեւ 'ի սեռանէ տուեալ, թէ յորմէ մատնանակի և որպիսի արամբ լուսաւոր վարդապետութեամբ պատմեսցուք ձեզ, և զնորին հրեշտակակրօն վարս առաքինութեան։

Էր այրս այս Մեսրովբ 'ի Տարաւն գաւառէ, 'ի Հացեկաց գեղջն.

ջէ, որդի Վարդանայ. 'ի մանկութեան ասեիս վարժեալ հելլենացւոց դպրութեամբն, և եկեալ 'ի դուռն Արշակունեաց թագաւորացն Հայոց, կացեալ յարքունական դիւանին, լինէր սպասաւոր արքայասուր հրամանին։ Եւ հմուտ եղեալ աշխարհակեաց վարուց 'ի զինուորական կարգս և յառաջադէմ՝ և սիրելի էր ամենեցուն մեծամեծաց և փոքունց, իմաստութեանն առաջնորդեալ յիրաւունս ամենայն։

Յետ այսորիկ 'ի ծառայութիւն Աստուծոյ մարդասիրի դարձեալ՝ մերկանայր յինքենէ զամենայն ըղբաղմունս, և առեալ զնաչն պարծանաց ըստ աւետարանական հրամանին եւանէր զկնի ամենակեցոյց խաչելոյն Քրիստոսի։ Եւ հաճեալ զհրամանաց պայման, 'ի խաչակիր գունդն Քրիստոսի աշակերտացն խառնի. և զկրօնս միանձանց յանձն առեալ յաւէտ կրօնաւորէր։ Եւ բազում և ազգի ազգի վշտակցութիւն ըստ աւետարանին կրէր. և

ամենայն կրթութեան հոգեւորացն
զանձն տուեալ՝ կրօնաւորէր 'ի քաղց
և 'ի ծարաւ, 'ի ցուրտ և 'ի մերկու-
թիւն. խոտաբուսա եղեալ, խարաղ-
նաղգեստ և գեռնատարած անկող-
նոք, և զհանգիստ քնոյ գիշերոյ
յոտնաւոր աքնութեամբ 'ի թօթա-
փել ակն վճարէր բազում ան-
դամ. և զայս առնէր ոչ սակաւ ժա-
մանակս: Եւ գտեալ զոմանս զդաս-
տատէրս յինքն յարեցուցանէր, ա-
շակերտել նմին աւետարանական
կրօնաւորութեանն: Եւ ամենայն
փորձութեանց 'ի վերայ հասեալոց
համբերական քաջութեամբ տա-
նեալ, և նովիմբ լուսաւորեալ և
պայծառացեալ 'ի հանդէս ճգնա-
ւորական հաճոյ Աստուծոյ և մարդ-
կան երեւեալ:

Առեալ այնուհետեւ երանելւոյն
աշակերտեալն իւր՝ երթայր 'ի
Գողթն. որում ընդ առաջ լինէր
Իշխանն Շամբիթ, և սիրով ընդու-
նէր որպէս զծառայ Աստուծոյ
բարձրելոյ. և բարեպաշտութեամբ
սպասաւորէր ըստ աշակերտական

հաւատոցն 'ի Քրիստոս։ Իսկ Երա-
նելոյն անդէն վաղվաղակի զվարդա-
պետական շնորհն 'ի մէջ առեալ՝
ուսուցանէր զքնակիչս քաղաքին և
գաւառին, կամաւ Իշխանին մատա-
կարարութեամբ։ Զի էր ինչ 'ի նո-
սա 'ի հեթանոսական սովորու-
թեանցն, զորս դարձուցանէր 'ի
գիտութիւն ճշմարտութեան, և
զամենեսեան լուսաւորէր շնորհաց
բանիւն։ Յորոյ 'ի ձեռն մեծամեծ
պքանչելիք երևեալ, գիւաց՝ կերպ
'ի կերպ լինելով՝ զաղաղակ բար-
ձեալ յամենեցուն լսելիս հնչեցու-
ցանէին զհալածանս Իւրեանց, ան-
կանելով 'ի կողմանս Մարաց։ Վասն
որոյ առաւել ունկնդիր լինէին ա-
շակերտեալքն հոգեկրօն վարդա-
պետին, վասն հաւատոց և վարուց
որ նոցա աւանդեցաւ 'ի սուրբ հարց
մերձաւորաց Քրիստոսի գրովք սրբ-
բովք։

Բայց զի ոչ էր գիր հայերէն լե-
զուին՝ բազում պակասութիւն լի-
նէր ճշմարտութեան աւանդեցն առ
աշակերտեալսն. իսկ Երանելի վար-

դապետն տարակուսեալ 'ի խոր-
հուրդս իւր՝ առ Աստուած ապա-
վինէր, որ կարողն է յամենայնի,
ցուցանել զգիր հայ լեզուիս, որով
նուազութիւնն յառաւելութիւն
դայցէ գրով։ Եւ յարուցեալ այ-
նուհետեւ հասանէր առ սուրբն
Սահակ հայրապետն Հայոց՝ յա-
ղագս գրոյ նշանագրաց. եգիտ
զնա առաւել եւս փափաքող
այնմ։ Եւ յետ բազում ջանից և
աշխատութեանց և ոչ ինչ օգտելոյ,
դարձեալ յաղօթս ապաւինելով
Աստուծոյ խնդրէին որում ցան-
կային։ Եւ մեկնեալ 'ի միմեանց, և
յանձն առեալ զխստամբերութիւն՝
ճգնէին առաւել քան զառաւելս։

Եւ յետ այսորիկ ծանուցեալ լի-
նէր 'ի Թագաւորէն Վռամշապհոյ,
որ և նա այսմ նախանձայոյզ է-
ղեալ, առաքէն զՄեսրովբ աշա-
կերտաւքն հանդերձ 'ի Միջագետս
Ասորւոց։ Եւ երթեալ նորա խուզ-
ղէր ուր ուրեք իմաստասէրաց համ-
բաւէր գիտութիւն։ Եւ հանդի-
պեալ Դանիէլի ումեմն եպիսկոպո-

սի Աստուծոյ առաքինութեան, որ ասաց նմա ցուցանել զնշանագիրս՝ որում ցանկայրն։ Եւ յետ բազում աշխատութեանց և քննութեանց և ուսմանց՝ անշահ մնացեալ. զի ոչ բերէր զբառս և զբանս ալփափիտացն ըստ հայերէն լեզուիս։

Յայնժամ հաւատալ առ Աստուած ապաւինի, և աղօթս արտասուալեցս առ Աստուած մատուցանէր, և հայցէր յամենեցունց տեառնէն զտիւ և զգիշեր՝ ցուցանել զփափաքելին նշանագրաց։ Եւ տեսանէր ոչ'ի քուն, երազ և ոչ յարթնութեան տեսիլ, այլ'ի սրբոյն գործարանի՝ երեւութացեալ հոգւոյն աչաց՝ թաթ ձեռին աջոյ, գրելով'ի վերայ վիմի. զի որպէս'ի ձեռն վերջք գծին ունէր քարն. և ոչ միայն երեւութացաւ, այլ և հանգամանք ամենայնիցն՝ որպէս յամանի'ի միտս նորա հաւաքեցաւ։ Եւ յարուցեալ յաղօթեցն՝ եառեալ զնշանագիրս մեր հանդերձ Ռուփինոսիւ աշակերտիւ Եպիփանու, որ'ի Սամոս էր միայնակեաց.

կերպաձեւեալ զգիրն ըստ հրամանի Մեսրովբայ վարդապետին և երանելւոյ, փոխադրելով ըստ հայերէն ըստ անապատաքուութեան սիղոբայից հելլենացւոց։

Եւ իսկոյն 'ի թարգմանութիւնս ձեռնարկեալ խորհրդաբար սկսանելով յԱռակաց իմաստնոյն Սողոմոնի, բովանդակեալ զքսան և երկուց յայտնիսն, զհին կտակարանն ցեղուալ 'ի հայ բան։ Եւ աշակերտք նորա Յովհան և Յուսէփ 'ի նոյնս նպաստ լինէին։ Եւ զարուեստ գրչութեանն ուսուցանէր մանկագոյն աշակերտացն։

Ընդ այն ժամանակս թագաւորեաց Թէոդոս փոքր։ Եւ եկեալ երանելւոյն Մեսրովբայ Հայոց վարդապետի, և բերեալ զնշանագիրս մերոյ լեզուիս առ սուրբն Սահակ Հայոց, և առ թագաւորն Հայոց Վռամշապուհ, յոյժ ուրախ լինէին որպէս ընդ տախտակս աստուածագիծս. և գոհութիւն և փառս ամենեցունց արարին մատուցանէին զնոքոգաւոր պարգե-

ւացն որ տուաւ Նոցա 'ի վերուստ։
Եւ ժողովեալ մանկունս ուշեղս և
քաջուամուն, փափկաձայնս և յեր-
կարոգիս, և դպրոցս կարգեալ յա-
մենայն գաւառս և 'ի գեղս հրա-
մանաւ սուրբ հայրապետին և թա-
գաւորին, ուստից զբնաւ ամենայն
աշխարհս Հայոց։ Երթեալ և յաշ-
խարհն Վրաց երանելի այրն Աստու-
ծոյ առնէ և Նոցա նշանագիրս ըստ
տուեցելոյ 'ի նմա 'ի վերուստ շնոր-
հացն Աստուծոյ. և վարդապետս
թողեալ անդ 'ի քաղաքաց քաղաքաց
ուսուցանել զմանկունս Նոցա։ Եւ
ինքն յԱղուանս երթեալ և անդ նորո-
գեր ըստ նմին օրինակի զնշանագիրս
և զուսումնասիրութեանն աւանդս,
և վարդապետս թողեալ անդ դառ-
նայր 'ի Հայս։ Եւ գտանէ զսուրբն
Սահակ հայրապետ 'ի թարգմանու-
թեան պարապեալ շնորհօքն Քրիս-
տոսի յաստուծոյն, ոչ լինելով յու-
նի. զի 'ի Մերուժանայ այրեալ էին
յոյն գրեանն հանուր աշխարհիս։
զի 'ի բարձանել զաշխարհս Հայոց
չտային Պարսկաց վերակացուքն յոյն

ումեք ուսանել զդպրութիւն իւ-
րեան մասին, այլ միայն ասորի։
Զան որոց յոյժ տարակուսեալ լի-
նէին սուրբ հայրապետքն Սահակ և
Երանելին Մեսրովբ. և գնացին ըզ-
խղմամբք արեւմտից վիճակին իւ-
րեանց 'ի մասն Յունաց։

Եւ առաքէ սուրբն Սահակ ըզ-
Մեսրովբ առ կայսր Թէոդոս և
առ հայրապետն Ատտիկոս հան-
դերձ թղթովք, և թոռամբն իւ-
րով Վարդանաւ, զդացուցանել
նոցա զդալուստն իւրեանց. և զի
ընդունիցին բնակիչք աշխարհիս
զնոր ուսումն վարդապետութեանս
Հայոց։ Որոց հանդիպեալ զօրա-
վարին Անատոլեայ, ոչ փոքր ինչ
արար ընդունելութիւն նոցա. զի
յառաջագոյն լուեալ էր զլուր ա-
ռաքինութեան Երանելեացն Սա-
հակայ և Մեսրովբայ. և 'ի ձեռն
թղթոց յառաջագոյն զդացուցա-
նէր կայսեր. և առնու հրաման
արժանապէս առաքել և բարեփա-
ռութեամբ յուղարկել 'ի Բիւզան-
դիոն։ Եւ յանդիման եղեալ թա-

գաւառին և Հայրապետին, և ձեռ-
նադրեցին զՄեսրովբ Եկեղեսիկոս. և գրեցին զնա ընդ առաջին
երանելի վարդապետան:

Եւ դարձան հանդերձ թղթովք՝
և եկեալ հանդիպէին սրբոյն Սա-
հակայ, և զօրավարին Անատոլեայ:
Որոց ընկալեալ զթուղթս և զհրա-
մանս՝ յոյժ ուրախ եղեն և փառա-
ւորութիւն ամենեցուն տուան և
Աստուծոյ հատուցին: Եւ փութայր
վաղվաղակի զհրամանն կատարել.
և առաքէ 'ի գաւառս և 'ի քաղաքս
Հայոց որ ընդ իշխանութեամբն
կայսեր, ժողովեալ բազմութիւն
մանկտւոյ 'ի տեղիս տեղիս, և դար-
մանս և ռոճիկս կարգէր յարքու-
նուստ, որպէս զի անզբաղապէս
ուսցին. յորս և երանելին Մեսրովբ
զլուսաւոր վարդապետութեանն 'ի
գործ արկեալ զժողովեալ մանկուն-
սն ուսուցանէր զնշանագիրն. և
վարդապետս կացուցանէր աշակեր-
տացն, զի առ փոքր փոքր զնոսա 'ի
կատարումն ուսմանն ածիցեն:

Յետ այնորիկ ձեռն արկանէր ըզ-

փակիր և զկամաւոր աղանդն բորբ-
որիանոսացն քննել. և զոր ոչն
գայթն յուղղութիւն հաւանական
բանին՝ սատակագոյն խոշտանգանօք
պատուհասէին 'ի բանդ և 'ի կա-
պանս, և յայլ ինչ տանջանարանս.
իսկ յորժամ այնու եւս պակա-
սեալք 'ի փրկութենէ գտանէին Ա-
ստուծոյ առելիքն, ապա խանձեալս
և մրեալս և պէսպէս խայտառակա-
նօք հալածէին յաշխարհէ: Իսկ ե-
բանելին զիւր վարդապետութեանն
պայման արարեալ, սկսեալ և վճա-
րեալ, և բազում շնորհագիր մա-
սեանս զհարց եկեղեցւոյ ստացեալ
ծովացուցանէր զվարդապետու-
թեանն խորութիւն. և լքեալ զեղբայր
զամենեքումբ 'ի բնակիչս աշխարհին
հոգեւոր վայելչութեամբ 'ի փառս
ամենասուրբ Երրորդութեանն: Եւ
յանձն արարեալ զամենեսեան ա-
մենապահ շնորհացն Աստուծոյ՝ ինքն
դառնայր 'ի կողմանս Հայոց, և շրջ-
էր զամենեքումբ, հաստատէր զա-
շակերտեալսն 'ի ճշմարտութեանն
հաւատն: Եւ եկեալ հանդիպէր

սրբոյն Սահակայ, և պատմեալ զե-
ղեալսն առ 'ի նմանէ, և միաբան
օրհնեցին զԱստուած 'ի վերայ նո-
րոգաստուր պարգեւացն առեալոց
նոցա 'ի վերուստ։

Յետ այսորիկ ուշ եդեալ երկո-
ցունց երանելեացն զիւրեանց ազգի
զդպրութիւնն առատացուցանել և
առաւելուլ՝ 'ի թարգմանել և 'ի
գրել ըստ յաջողութեանն Աստու-
ծոյ։ Վասն որոյ առաքեն երկուս
յաշակերտացն 'ի քաղաքն Եդե-
սեայ զԵզնիկ և զՅովսէփ, զի յա-
սորի բարբառոյն զսուրբ գիրս նոր
թարգմանեսցեն 'ի հայ լեզու, և
գրով աւանդեսցեն իւրեանց աշ-
խարհիս։ Իսկ նոքա եկեալ կատա-
րեցին զհրամայեալսն, և 'ի ձեռն
հաւատարիմ եղբարց առ պատուա-
կան հարս իւրեանց առաքեցին ըզ-
գրեանն. և ինքեանք անցեալ գնա-
ցին 'ի կողմանս Յունաց 'ի քաղաքն
Բիւզանդիոն յուսումն իմաստասի-
րութեան, որ և ուսեալ և տեղե-
կացեալք՝ թարգմանիչք եղեալք
ըստ հելլենականի լեզուին։

Ապա յետ ժամանակի ինչ ընդ
մէջ անցանելոյ, դէպ լինէր եղբարց
մանց 'ի Հայաստան աշխարհէս եր-
թալ 'ի կողմանս Յունաց 'ի քաղաքն
Կոստանդնուպոլիս, որոց անուանքն
էին Միութիւն Ղեւոնդ և Միւսուն
Կորիւն. և երթեալք յարին յԵՂ-
նիկն, իբր առ ընտանի և անդակից
իւրեանց եղբայրութեանն. և ան-
դէն միաբանեալ զհոգեւոր սիրոյ-
ն խնդիր վճարէին։ Յորոց յետ
այնորիկ հաստատուն օրինակաւք աս-
տուածատուր գրոցն և բազում
ինորհագիր հայրապետացն աւան-
դութեամբք և Նիկիայ և Եփեսոսի
սուրբ ժողովոցն կանոնիւքն դար-
ձեալ լինէին յաշխարհն Հայոց և 'ի
հայրենիս իւրեանց. և առաջի դը-
նէին սուրբ հարանցն զբերեալ կը-
տակարանն եկեղեցւոյ սրբոյ։

Իսկ երանելեացն սրբոյն Սահա-
կայ և Մեսրովբայ զեկեղեցական
զգրոց զգումարութիւնն կանխաւ 'ի
Յունարէն բարբառոյ 'ի հայերէն
թարգմանեալ, և զբազումս և զհայ-
րապետացն սրբոց ճշմարտապա-

7-5-6019

տուամ խմաստութիւնս յօրինեալ 'ի
հայ լեզու : Դարձեալ յետ այսո-
ւրիկ առեալ հանդերձ Եղնկաւ զյա-
ռաջագոյն զյանկարծագիւտ զիտու-
թանակի թարգմանեալսն՝ հաստա-
տէր Ճշմարիտ օրինակօքն բերելովք.
և շատ եւս այլ մեկնութիւնս գրոց
սրբոց թարգմանէր ըստ հայերէն
նշանագրացն : Եւ այնպէս զամե-
նայն ժամանակս իւրեանց ընթեր-
ցուածոց գրոց սրբոց պարապէին
երանելի սուրբ հարքն զտիւ և զգի-
շեր . և նովին ծաղկեալք և շահա-
ւետեալք՝ օրինակ բարեաց ուսմնա-
սիրաց առընթերակացն լինէին . մա-
նաւանդ զի ունէին եւս զպատուի-
րական զգուշացուցիչսն յաստուա-
ծակարգ պատգամաւորացն . յորոց
առաջինն պատուիրէ յօրէնս տեառն
խորհել 'ի տուէ և 'ի գիշերի . և եր-
կրորդն ասէ . Միտ դիր ընթեր-
ցուածոց գրոց մխիթարութեան ,
վարդապետութեան . մի անփոյթ
առներ զշնորհացդ որ 'ի քեզ են .
յայդ խորհեաց և 'ի դոյն կանխես-
ջիր , զի քո յառաջադիմութիւնդ

ամենեցուն յայտնի լիցի · զգոյշ լինիջիր անձինդ , և 'ի դմին յա-
մենջիր · զայդ եթէ առնիցես , և զանձն ապրեցուսցես և զայնոսիկ որ
քեզն լուիցեն ։

Ապա դարձեալ յետ այնպիսի լուսաւոր վարդապետութեանն , սկսեալ երանելւոյն Մեսրովբայ Ճառս յաՃախագոյնս , դիւրապա-
տումս , շնորհագիրս , բազմագիմիս 'ի զօրութենէ և 'ի հիւթոյ գրոց մար-
գարէականաց և առաքելականաց կարդեալ և յօրինեալ՝ լի ամենայն Ճաշակաւք աւետարանական հաւա-
տոցն Ճշմարտութեան · յորս բա-
զում նմանութիւնս և օրինակս 'ի յանցաւորացս ասասի առ Ճշմարտու-
թիւնն բերելով , առաւելագոյն վասն յարութեանն յուսոյն առ հանդերձեալսն յերիւրելոյ նկա-
ւեաց · զի հեշտընկալք և դիւրա-
հասոյցք տխմարագունացն և մար-
մնական իրօք զբաղելոցն՝ ուսցին սթափիլ , և 'ի զուարթացուցանել և հաստատիմն առ 'ի խոստացեալ աւետիսն քաջալերել ։ Եւ այսպէս

ընդ ամենայն կողմանս Հայոց և
Վրաց և Աղուանից զամենայն ժա-
մանակս կենաց իւրոց զամառն և
զձմեռն զտիւ և զգիշեր՝ անվեհեր և
առանց յապաղելոյ զնորոգագիր
վարդապետութիւնն ուսուցանէր։
Եւ իւրովն իսկ ճանապարհորդեալ
աւետարանական և ողջապատումն
բանիւ յաղագս հաւատոյ և վարուց
առաջի թագաւորաց և իշխանաց և
ռամկաց, անընդդիմաց 'ի հակառա-
կորդաց ըստ տուելոյ նորա 'ի վե-
րուստ շնորհի՝ ուսուցանէր 'ի փառս
և 'ի գովութիւն Աստուծոյ, և զա-
մենայն ոգի քրիստոսասէրս և ոգե-
զէնս վառէր. և բազում բանդա-
կանաց և կալանականաց և տոգնա-
պելոյ 'ի պէսպէս վտանգից՝ փրկու-
թիւն ընձեռեաց, կորզելով զսա-
տակուսեալսն ահաւորութեամբ զ-
ուութեամբ փառացն Քրիստոսի՝ 'ի
գովեստ փրկութեան աւետարա-
նին. և բազում մուրհակս անիրա-
ւագիրս պատռեաց. և զբազում
ազատս և կարճամիտս մխիթա-
րեաց վարդապետութեամբն, և

նուաՃեաց ակնկալութեամբ յու-
սոյն 'ի համբերութիւնն ըստ յայտ-
նութեան փառաց մեծին Աստու-
ծոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի.
և զամենայն հաւատացեալս միան-
գամայն զարս և զկանայս յաստուած-
պաշտութեան պայման անդր փո-
խադրեաց:

Եւ դարձեալ անհամար և գուն-
դըս գունդս 'ի շէնս և յանշէնս 'ի
ճշմարտութեան աւանդս սուրբ
հարցն հաստատէր 'ի փառս և 'ի
դովեստ ամենասուրբ Երրորդու-
թեանն: Կա և 'ի դաշտականս և
լեռնականս, անձաւամուտս և լեռ-
նականս և արգելական, բնակեցու-
ցեալ կրօնաւորիլ առ 'ի բարեպաշ-
տութեանն Յանս. զոր ոչ միայն բա-
նիւք և վարդապետութեամբ, այլև
արդեամբք զանձն օրինակ կացու-
ցանէր միանձանց, հանապազորդ
պահօք և աղօթիւք, աքնութեամբ և
արտասուօք, խոնարհութեամբ և
հեզութեամբ և կուսութեամբ նա-
հատակեալ. և ընդդէմ հանապա-
զորդեան թշնամւոյն քաջապէս ա-

ընացեալ. նա և 'ի պատուոյ և 'ի փառաց խուսափեալ, երթեալ սրտամուտ ծակախնթ լինէր, և զառաջեայ զկեանսն խոտաբուտ ճաշակաւք վճարէր։ Եւ այնպէս վաստակեալ տկարութեան զանձն իւր տուեալ անհեղգաբար, հայեցեալ 'ի մխիթարութիւն առաքելական խրատուն, թէ Յորժամ վասն Քրիստոսի տկարանամ՝ յայնժամ զօրացեալ լինիմ. և եթէ Լաւ լոցի ինձ մնալ 'ի տկարութեան, զի բնակեսցէ յիս զօրութիւնն Քրիստոսի։

Անդ էր զուարճանալ հոգւով ուր ուրեք գադարեալ լինէր. և ոչ պայծառանայր գինով, այլ երդոք հոգեւորաւք 'ի փառս և 'ի գովութիւն Աստուծոյ. 'ի կրթութիւնս միշտ քաղցրութեանց ընթերցուածոց հոգեպատում գրոց քաջալերութիւնս յորդորականս, լուսաւոր կարգաց և տօնից զանձինս ճգնաւորացն ամենաշնորհ վարդապետութեամբն զինէր առ 'ի յառաջադէմ ընտրութիւն պատկահամբար քրիստոսադիր կիսին։ Եւ եռայր հոգ-

ռով յաստուածպաշտութեանն մըր-
ցարան վերին կոչմանն , աղերսալի
աղօթիւք և փարելի պաղատանօք և
հաշտելի խնդրուածօք յամենեցունց
ուեառնէն , վասն ամենեցուն կե-
նացն յաւիտենականաց արժանի լի-
նել մասին արքոյն 'ի լոյս : Եւ նո-
ին հոգեկրօն վարուք կայր յանա-
պատ տեղիս . մինչ ազգ լինէր իրաց
մինչ օգտակարաց 'ի կողմանս կող-
մանս յաշակերտեալսն , յայնժամ
ելանէր յօգնականութիւն և վճա-
ռէր զպէտս պիտոյից՝ ուր հոգեւոր
կարգաց էր նուազութիւն , շնոր-
հօքն Քրիստոսի : Եւ յորդորագոյնս
և պարարտագոյնս անփակ բերա-
նով և հանճարով խմաստութեամբ
զվտակս վարդապետութեանն 'ի
սիրտս ուերմանելեացն ծաւալեցու-
ցանէր . և զայս առնէր զամենայն ժա-
մանակս իւր երանելի վարդապետն
Հայոց Մեսրովբ : Քանզի սովոր
իսկ էն ճշմարիտ վարդապետք զան-
ձանց առաքինութիւն կանոնէն աշա-
կերտացն առնել . որպէս զՔրիստոսի
և Աստուծոյ մերոյ է ուսուցանել

ըստ անօրէնութեանն. քանզի սկը-
սաւ, ասէ, Յիսուս առնել և ուսու-
ցանել, և եթէ, Հայեցարուք յա-
ռաջնորդն հաւատոց և՛ի կատարիչն
Յիսուս, որ փոխանակ ուրախու-
թեանն որ առաջի կայր՝ յանձն էառ
զխաչն, արհամարհեաց զամօթ։ Եւ
զինչ այս վերոյ հաստուցումն ցու-
ցանի հաւատացեալ՝ի Քրիստոս Յի-
սուս. Նստաւ, ասէ, ընդ աջմէ մե-
ծութեանն՝ի բարձունս. ապէ ա-
ծէք զմտաւ որ այսպիսի համբերու-
թիւն վասն մեր կրեաց, զի մի աշ-
խատ լինիցիք և լքանիցիք՝ի վարս
առաքինութեան. զի ոչ վասն ան-
ձին ամենատէրն զայս առնէր, այլ
վասն համաշխարհական փրկու-
թեանն, յուսումն ստուածասի-
րաց որ ընդ նոյն ճանապարհորդեն
՝ի հանդերձեալսն, որ են օրինակ
ամենայն հաւատացելոց՝ի Քրիս-
տոս, որպէս ճառք աւետարանին
քարոզեն։

Իսկ արդ եթէ՝ի թեթեւագոյն
արուեստաւորս և հանճարեղ իմաս-
տից տգիտանամք, որ ընդ ստուա-

ծախսման կատարէ զշնորհացն ներ-
գործութիւնն , որում երանելին
Պաւղոս ամենեցուն ազիտանալ ա-
սէ , այլ և յուշառնէ զառաջնորդս
կենաց բանին . Հայեցեալք , ասէ ,
յելս գնացից նոցա նմանողք եղե-
ղուք , և յուսմունս պէսպէս և յօ-
տարաձայնս մի գանդաչէք , այլ ա-
ռաքելոց և մարգարէից և երանեալ
սրբոց հարցն հետեւեալ ճշմարտու-
թեանն աւանդից զոր նոքայն հոր-
դեցին զանսայթաք ճանապարհն
յերկնից արքայութիւնն . և օրինակ
աշակերտելոցն զհաւատս և զվարս
բացայայտեցին գրովք սրբովք . եր-
բեմն առանձինն խրատելով ըստ իւ-
րաքանչիւրոցն օգտի , երբեմն 'ի ժո-
ղովս բազմամբոխս զփառս Քրիս-
տոսի շնորհօք և մարգասիրութեամբ
տեառն բարձրացուցանէին , և յա-
ռենայն աշխարհակիր ղբօսանաց 'ի
բաց կալ , և միայն աստուածապաշ-
տութեան պարտիլ . զոր և մար-
գարէքն և առաքեալքն յառաջա-
գոյն գուշակեցին ըստ Պաւղոսի վը-
կայութեանն . Ընկեցան , ասէ , լաշ-

կամաշկոք և մորթովք այծենոք, կա-
ղոտեալք, նեղեալք, չարչարեալք,
յանապատի մոլորեալք և յայրս և
փոսարս երկրի. և սոքա ամենեքեան
վկայեալք 'ի հաւատոցն՝ ստուգե-
ցին զարդարութեան ճանապարհն
աշակերտելոցն, որ տանի 'ի կեանան
յաւիտենից։

Ուստի երանելիս այս Մեսրովբ
բարձեալ բերէր զաւանդելոցն պա-
տիւ 'ի փառս ամենեցուն տեառնն,
և զամենայն աշակերտեալսն իւր 'ի
նոյն հանդէս յորդորէր. և այնպէս
յառաջագէմ ամենայն ատուա-
ծահաճոյ վարուք և հաւատոյ վայ-
ելչութեամբք լցեալք պատրաս-
տեալք և ամրացեալք 'ի բաղում
ժամանակս աշակերտեալք առ 'ի
նմանէ, նովին 'ի նոյն կանխեալք և
'ի նմին հանապազորդեալք 'ի փառս
ամենատուրբ Երրորդութեանն։

Յայնժամ արք ոմանք հալա-
ծեալք 'ի ժողովոյն Եփեսոսի, ո-
րում անուն էր Թէոդորոս ըստ
Պաւղոսի Սամոսատացւոյ և ըստ Նես-
տորի հերձուածոյն գլխոս ատացեալ

համաձայնս պարզամտացն և դիւ-
բահաւանիցն, և եկեալ յաշխարհս
մեր՝ կամէին ուսուցանել զչար ա-
ղանդն։ Վասն որոյ 'ի սուրբ ժողո-
վոյն առաքեալ թուղթս ազգ առ-
նէին Ճշմարտահաւատ փառաւոր-
ացն Սահակայ և Մեսրոբայ։ Եւ
նոցա Ճշմարտապէս փութով զկա-
մակոր հերձուածողն 'ի բաց հա-
լածեալ յիւրեանց աշխարհէն, զի
մի ինչ 'ի լուսաւոր վարդապետու-
թիւնն՝ ծուխ ինչ սատանայական
մերձեսցի։

Յետ այնորիկ դէպ լինէր փոխել
յաշխարհէս երանելւոյն սրբոյն Սա-
հակայ հայրապետին Հայոց Ճշմա-
րիտ վարուք և ուղղափառ հաւա-
տով, լցեալ աւուրքք և երկայնա-
կեաց ժամանակօք վայելեցուցեալ
զամենայն աշխարհս Հայոց 'ի լու-
սաւոր վարդապետութիւնն, այն-
պէս հանդեաւ 'ի Քրիստոս, յա-
ռաջնու

նաւասարդի , յերրորդ ժամու աւուրն պաշտաման , որ և զօր ծնընդեանն 'ի նոյն աւուր : Եւ այնպէս զամբիծ հոգինաղմոսերգութեամբ և աղօթիւք ծերունւոյն աւանդեալ զհոգին 'ի Քրիստոս , ասէ . Ի ձեռս քո յանձն առնեմ զհոգի իմ , ըստ նախաւկայնին բանի : Ըստ նմին օրինակի և նորա ապօսպարեալ զանձն և զմնացեալսն զիւր զհօտն ամենապահ շնորհացն Աստուծոյ յանձն արարեալ՝ այնպէս փոխեցաւ յաշխարհէս : Զոր առեալ վաղվաղակի պարապէին հանդերձանօք ըստ խորհրդածութեան քահանայապետութեան թաղմանն՝ իւրիսկ ձեռամբն աշակերտաքն . որոյ առաջնոյն Երեմիա անուն , այր սուրբ և երկեւղած յԱստուծոյ , և այլք ընդ նմա , հանդերձ կնաւն Վարդանայ Մամիկոնեանի . և բարձեալ զմարմին երանելւոյն բազում ամբոխիւ , եպիսկոպոսօք և քահանայիւք , սարկաւագօք և դպրօք , սաղմոսիւք՝ օրհնութեամբ և երգօք հոգեւորօք՝ ածին 'ի Տարաւն գաւառ 'ի գեւղն

Յաշտիշատ. և անդ 'ի մարտիրոսա-
կան խորանին յարկեալս սրբոցն հան-
գուցանէին զսրբոյ առն Աստուծոյ
զնշխարսն հանդերձ ամենայն պա-
տուով. և կնքեալ քրիստոսանշան
կնքովն, և զյիշատակ սրբոյն կատա-
րեալ 'ի փառս և 'ի գովութիւն Ա-
ստուծոյ, այնուհետև յիւրաքան-
չիւրսն դառնային. զորոյ և զտօն յի-
շատակի սրբոյն տօնախմբեն յերե-
սուն նաւատարգի ամսեանն բա-
զում ժողովովք. և բարեխօսու-
թեամբ սուրբ հայրապետին զիւ-
րաքանչիւր օգուտ յամենեցունց
տեսանէն ընդունին։

Իսկ երանելւոյ զուգականին զայս
լուեալ, զսուրբ վարդապետէն ա-
սեմ զՄեսրովբայ, տրտմեալ և տը-
խրեալ լինէր. և յարտասուս ե-
ղեալ վարանէր զի 'ի նմանէ բար-
ժանուն և զվախճան առն Աստու-
ծոյ, և զսպառումն զարմից սրբոյն
Գրիգորի. և հոգովք տարակու-
սեալ պաշարէր առ այնպիսի ա-
ղէտս. մանաւանդ զի ոչ տեսանէր
զայնպիսի զոք առ 'ի բարեպաշտու-

թեան ջանս և առ լուսաւոր վար-
դապետութիւնն և առ վերակացու-
թեան շնորհն, որ դեր 'ի վերոյ էր
և քան զառաջինն զիւր սուրբ
հարսն։ Յայսոսիկ մեռելոհ եղեալ
ողբերգական բարբառով վարանէր.
զի ոչ զոք ունէր համաշունչ թէ
ընտանեբար հոգայցէ վասն Հայաս-
տանեայց. և էլս այսոցիկ ՀԱ-
տուած յիշէր և մխիթարէր ըստ
սաղմոսերգողին, որ արար զամե-
նայն և փոփոխէ անհաս խմաստու-
թեամբ և մատակարարութեամբ։
Եւ զինքն առաւել եւս յորդորէր 'ի
կրօնաւորութեան կարգս, համանգ-
ամայնցն յաղթող լեալ էր կրօ-
նաւորաց, ըստ երկնային կոչմանն
հանդիսանալ 'ի բարձրագոյնսն շը-
նորհօքն Քրիստոսի՝ առանց հեղ-
գութեան։ Եւ յորդորէր զամե-
նայն աշակերտեալսն առ բարեացն
քաջութիւնսն, և յուշ առնէր ամե-
նայն անձին զգուշանալ ամենայն
անձին, 'ի վարս և 'ի գնացս խոհե-
մագոյն և հանճարեղ խրատուք.
մինչ բազմաց խիստ և ծանր և դը-

ժուար համարեալ զվարուցն կըր-
թութիւնն։ Այլ նա զվերջինսն մո-
ռանայր և յառաջադէմսն նկրտէր
ծերունի հասակաւն, զմեռաւ ածե-
լով զմօտաւոր վախճանն՝ ոչ տայր
քուն աչաց և ոչ նինջ արտեւանաց
մինչեւ ցօր կոչման Եղանեղոյ նորա
յաշխարհէս։

Եւ մինչդեռ այնպէս մերձաւո-
ցացն առ իւր և զհոգեւոր եռանդն
բորբոքէր յաստուածսիրութիւն,
և բաղում թուղթս խրատուց ընդ-
ամենայն գաւառսն առաքէր, ան-
դէն 'ի նմին ամի յետ վախճանի Ե-
ղանեղեանն սրբոյն Սահակայ 'ի վե-
ցերորդ ամսեանն 'ի տան և յեւթ
մեհեկանի՝ հասանէր վախճան սըր-
բոյ վարդապետին Հայոց, ՅԱՅ-
ՐԱՐԱՏ գաւառի 'ի 'Նոր քաղաքն,
'ի նոյն հոգեկիր կրօնս, որպէս և
յառաջագոյն ասացաք, հասանէր
սրբոյն քրիստոսակոչ կատարումն՝
յետ սակաւ ինչ աւուրց հիւանդու-
թեան։ Եւ յորժամ կամեցաւ Ա-
ստուած որոշել զսուրբն 'ի միջոյ ձե-
ռասուն աշակերտացն և խառնել 'ի

գունդս սրբոցն, թեթեւացեալ և սթափացեալ 'ի ցաւոցն, և կանգնեալ նստաւ 'ի ժողովոյն միջի, և համբարձեալ զձեռան հանապազատարածս յերկինս, զամենասուրբ զՅերրորդութիւնն օրհնէր, և յանձն առնէր զաշակերտեալսն ամենապահ շնորհացն Աստուծոյ, զի կայցեն հաստատուն 'ի հաւատս և 'ի վարս ուղղութեան, և առանց գայթակղութեան կատարեսցեն զարդարութիւն սուրբ հարց մերձաւորաց Քրիստոսի։

Եւ անուանք գլխաւոր աշակերտացն ժողովելոցն առ նա, են այս՝ առաջնուն Յովսէփ, և երկրորդուն Թոդիկ, արք զգաստք և ըղձուշագոյնք։ իսկ 'ի զինուորացն՝ առաջնուն Հմայեակ 'ի Մամիկոնեան տոհմէն, և երկրորդին Վահան յազգէն Ամատունեաց, որ էր հազարապետ Հայոց մեծաց, աստուածասէրք և երկիւղածք յԱստուծոյ։ Եւ մինչդեռ ձեռք սրբոյ վարդապետին ընդ երկինս կարկառեալ կայր, տեսիլ սքանչելի և խա-

չանշան լուսաւոր շողաձեւ երեւէր
'ի վերայ ապարանիցն՝ յորում է-
ր անեղին վախճանէր. զոր և ամե-
նայն ուսուէք ինքնաաեւ լեալ և ոչ
յընկերէն պատմեալ։ Իսկ որբոյն
զսիրոյ և զմիաբանութեան պա-
տուիրանն աւանդեալ, և զհեռա-
ւորս և զմերձաւորս օրհնութեամբ
պահեալ, և զհաճոյական աղօթսն
հաստատեալ 'ի տէր, անդէն վաղվա-
ղակի աւանդեաց զհոգին 'ի փառս
ամենասուրբ Երրորդութեանն։

Զոր առեալ Հմայեկի և Վահա-
նայ կազմութեամբ վախճանելոց,
հանդերձ աշխարհաժողով ամբո-
խիւ, սաղմոսիւք և օրհնութեամբ և
երգօք հոգեւորօք, մոմեղինօք վա-
ռելօք և ջահիւք բոլբոքելովք և ա-
նուշահոտ խնկօք, և այնու խաչա-
նշան յառաջխաղաց լուսաւոր նշա-
նաւն՝ յԱւշականն եւանէին, և անդ-
'ի մարտիրոսական յարկսն հան-
գուցանէին զսուրբ այրն Աստու-
ծոյ, և զօրինաւոր տօն յիշատակի
երանելւոյն կատարէին։ Ապա նշանն
աներեւոյթ լինէր, և նոքա յիւրա-

քանչիւր տեղիս գառնային, փառա-
ւորելով և օրհնելով զԱստուած 'ի
վերայ սքանչելեացն զոր տէր եցոյց
'ի վերայ վարդապետին։

Իսկ յետ ամսոց երից անցելոց
ըստ յաջողելոյն Աստուծոյ Վահա-
նայ ամսաւունւոյ քրիստոսասիրի՝
կամեցաւ տաճար փառաց անուանն
Աստուծոյ շինել յանուն սրբոյ վար-
դապետին, 'ի տաշածոյ վիմաց
սքանչելապէս յօրինեալ խորանս և
գեղեցկապէս կազմեալս. և անդ 'ի
ներքսագոյն խորանին զսրբոյն հան-
գիստն առնել. և վայելուչ սպա-
սուք ոսկւով և արծաթով և ա-
կամբք պատուականօք զտուն Ա-
ստուծոյ և զսեղան կենարար մար-
մնոյ և արեանն Քրիստոսի զարդա-
րէր։ Եւ զնորին աշակերտն զդատ
և բարեպաշտն զԹոդիկ սպասաւոր
նորին կացուցանէին՝ այլ եւս եղ-
բարբք՝ կատարել զհանապազորդ
պաշտօնն։ Եւ որ վերակացուս
ժողովրդեանն ըստ յայտնութեան
սուրբ հարցն՝ զՅովսէփ և զՅովհան
կացուցանէին արս ճշմարտասէրս և

ողջախոհս . որոց դէպ լինէր յետ
վախճանի սրբոցն ազգի ազգի փոր-
ձութեանց 'ի վերայ եկեղոց 'ի բըռ-
նաւորաց , մենակուս մենամարտիկ
'ի Պարսս 'ի Տիսպոնէ քաղաքի վասն
Քրիստոսի , յաղթութեամբ բազ-
մաւ . որոց և զնոսատուլանողական
անուն ժառանգեալք , 'ի նոյն վերա-
կացութիւնս վարդապետութեան
դառնային յերկիրս Հայոց : Իսկ բա-
ղեացապարան Վահան յանկարծա-
հաս կենաց , ասպնջական ցանկալի
ամենայն սրբոց լինէր , որ աշխար-
հածնունդ հայրենեաց սեպհա-
կան որդի գտեալ՝ շնորհօքն Քրիս-
տոսի մերձաւոր կենացն յաւիտե-
նից լինէր :

Եւ արդ ըստ օրինակի գրելոցս
առ 'ի մէնջ զերանելեաց սուրբ
հարցն զվարս և զվախճան փոքր ինչ
պատմելով՝ 'ի կատարումն զբանս
ածից . ոչ եթէ 'ի հին համբաւուց
ղուցաց տեղեկացեալ և մատենա-
գրեալ զսա կարդեցաք , այլ որոց մե-
ղէն իսկ ականատես կերպարանացն
և առընթերակաց հոգեւորական

գործոց սրբոցն, և լսողք շնորհա-
պատում վարդապետութեանն. և
նոցին սրբոց վարդապետաց արբա-
նեակ ըստ նոցին աւետարանական
հրամանաց. ոչ առ սուտապատում
յարմարեալ զբանս 'ի մեր գովու-
թիւն զՀայրենիսն յարգելով, այլ
զյաճախագոյնսն թողեալ զառաքի-
նեացն հանդէս, որ այժմ ծաղ-
կեալ է 'ի Քրիստոս և յայնժամ
ընդ նմա յայտնեացի փառաք, յոր-
ժամ գայցէ փառաւոր լինել 'ի մէջ
սրբոց իւրոց: Այլ սուղ լինէ 'ի նշա-
նաւոր գիտակացն պատմելով զՀա-
մառօտս պատմեցաք. որք ոչ մեզ է
շահս, այլ և որք զմատեանս ընթեռ-
նուն, յայտնեացի արանցն քաջու-
թիւն: Քանզի և ոչ իսկ հանդուր-
ժէաք բաւել կարել զամենայն ա-
ղարեալս սրբոցն գրով նշանակել
զնուրաքանչիւրսն, այլ 'ի գիւրա-
գոյնսն և 'ի հեշտագոյնսն զանձինս
պարապեացուք, և զանցեալ զբաղ-
մախուռն արգասեօք սրբոցն առ 'ի
մանրակրկիտսն առնելոյ թողաք, և
զկարեւորագոյնսն սուղ լինէ մատե-

նագրեցաք ըստ մերում կարի, ոչ՝ի պատիւ ընտրելոցն մերձաւորացն Քրիստոսի, որք ամենապայծառ հաւատով և վարուք ծանուցեալք եղեն, այլ յօրինակ քաջալերիչ հոգեւոր ծննդոց իւրեանց, և որոց նոքօք աշակերտելոց եցեն զճշմարտութիւն յազգս իւրեանց՝ աւանդեցաւ այս, 'ի փառս ամենասուրբ Երրորդութեանն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՍՐԲՈՅՆ ԵՂԻՇԷԻ

ՎԱՐԴԱՊԵՏԻ

ՊԱՏՄՈՒ վասն երանելւոյն Եղիշէի վարդապետի թէ էր զինուորական սրբոյն Վարդանայ և սպասաւորէր նմա, և էր հաւատարիմ յամենայն իրս առտուածայինս և մարդկայինս. և կեցեալ և վարժեալ բարեպաշտութեամբ և ուսումնասիրութեամբ, և ամենայն անցեալ անցելոց ընդ Հայս որ 'ի Պարսից հասին վասնզքն ընդ ժամանակսն ընդ այնոսիկ, խելամուտ եղեալ պատերազմաց և յաղթութեանց և հալածանաց եկեղեցւոյ և առաքինութեան և քաջութեան սրբոյն Վարդանայ, և զոք ընդ նմա միաբանեալ

կատարեցան յաղագս 'ի Քրիստոս հաւատոցն և պատկեցան՝ արհամարհելով զզրադաշտական մոլորութիւն մոգութեանն, միանգամայն զեպիսկոպոսացն խրատուց և զհանդիսից և վկայութեանց և զքահանայից և ամենայն սրբոցն մարտան որ մարտեան և պարտեցին զբռնաւորն որ խրոխտացեալ էր 'ի վերայ ամենայն եկեղեցեաց սրբոց։ Եւ պատմագրեալ զայս ամենայն և որ 'ի նոսա յարմարի բան և գործ, զորս ստուգապէս երանելւոյն Եղիշէի զատացեալն 'ի պատմագրաց սրբոց Վարդանանցն է ուսանել։ Որ և այլ գիրս ստացեալ կանոնականս և զգուշաւորս սրբոյ եկեղեցւոյ և առաւելեալ 'ի վարս արդարութեան հաճոյ լինէր Աստուծոյ և մարդկան։

Յետ այսորիկ վարս կրօնաւորութեան յանձն առնոյր և զխստամբերութիւն ճգնութեան, և պահօք և աղօթիւք հանդիսանայր, և որպէս յաչեաց ծովու 'ի նաւահանգիստ փութացեալ հասանէր յանապատ, 'ի բաց լքանելով զերկրաւորս՝ ըզ-

հետ երթեալ հոգեւորացն, զմտաւ
ածելով զվարս առաջին հարցն և
նոցա լեալ նմանող և նախանձաւոր
նոցին վարուցն, ջանայր մտանել ընդ
նեղ դուռնն որ տանի 'ի կեանս յա-
ւիտենից։ Եւ զամենայն հանդէս
առաքինութեան յանձին բերեալ
որոշէր զինքն 'ի միաբանեկեցաց եղ-
բարց, և զամայութիւն ստացեալ
օթեւանս բնակութեան յանապատս
առնէր. ուր առնէ այցելութիւն
տէր սրբոց, խոտաբուտ անցուցա-
նելով զառօրեայ կենցաղս, միայ-
նացեալ յաղօթս, և 'ի խնդրուածս
զցայգ և զցերեկ, ունկնդիր եղեալ
խրատուն Պաւղոսի որ վասն սրբոցն
պատմէ՝ շրջեցան լեշկ մաշկօք և մոր-
թովք այծենեաց, կարօտեալք նե-
ղեալք չարչարեալք զորս ոչ արժէ
աշխարհս. յանապատի մոլորեալք
'ի յայրս և 'ի լերինս և 'ի փոսարս
երկրի։ Զայսպիսի վարս ստացեալ՝
հանդիսանայր ընդդէմ սատանայի
փորձութեանց ատուածային զօ-
րութեամբն, և յամենայնի զօրաւոր
և յաղթող եղեալ երանելին Եղի-

շէ, և բնակէր յայրի ուրեմն միշտ
յառաջիկայսն ընթանալով. և կոչի
այրն յանուն Եղիշէի Սուրբ այր Ե-
ղիշէի, որ և այժմ ամենեցուն յայտ-
նի է և վկայ ազգաց յազգս երա-
նելոյն: Եւ եկեալ գտանէին ըղ-
սուրբն բացօթեայ հովիւք, և նշան
ինն պատնէլի առ երանելոյն տե-
սեալ հոչակէին զայրն և զտեղին:
Իսկ նորա խոյս տուեալ՝ կամելով
զինքն անյայտ առնել, և եկեալ
բնակէր 'ի գաւառին Ռշտունեաց
յայրի ուրեմն մօտ 'ի ծովեզերին,
որ և նա կոչեցաւ սուրբ Եղիշէի
այր: Եւ յետ բազում ճգնու-
թեանց և խստամբեր վարուց, որ
բազում ժամանակս եղեալ յա-
ռաջնումն այրին և սակաւ ամն 'ի
վերուստն, յորում վախճան իսկ
հասանէր երանելոյն: Եւ ոչ զայն-
քան զառնն պատուեցէ զհանդէս
որով եկաց և նահատակեցաւ ընդ-
դէմ հանապազորդեան թշնամւոյն
աղօթիւք, պահովք և ոչնութեամբ
և արտասուօքք, իբրեւ զանմարմին 'ի
մարմնի կեցեալ և զդիւացն մարման

վանեալ յաղթող զօրութեամբն Քրիստոսի, որ այժմ ծածկեալ է ընդ Քրիստոսի և յետոյ ընդ նմա յայտնելոց է։

Ապա եկեալ արք ոմանք գտա-նէին զնա վախճանեալ, և յերեւ-մանէն ծանուցեալ եթէ ծառայն Քրիստոսի է. քանզի ոչ իսկ էր պարտ ծածկել սրբոյն երեւումն՝ որ և զայլս 'ի նոյն հանդէս յորդո-րէր։ Իբրեւ իրքն հռչակէր, ապա բազում քննութիւն լինէր. յայն-ժամ ատուգեցաւ և ծանուցաւ ա-մենայնիւ եթէ սուրբն Եղիշէ է որ յառաջնումն այրին բնակեալ էր 'ի Մոկաց գաւառին. որում շինեալ հանդիստ մօտ 'ի յայրն փոխէին 'ի տեղի հանգստեանն. յորում տեղ-ւոջ բազում բժշկութիւնք լինին։

Եւ լուեալ զայն իշխանին Մոկաց նախանձէր զբարւոք նախանձ, վասն զի ոչ հանդիպեցաւ վախճան երա-նելւոյն յիւրում աշխարհին. ապա դայր 'ի տեղի հանգստեանն պատ-ճառաւ ինչ բժշկութեան և օթե-վանս արարեալ հնարէր զամենայն

գիշերն բարեխօս ունելով զտուրբն առ Աստուած, զի թերեւս արժանի եղեցի առնուլ մասն ինչ 'ի նըշխարաց երանելւոյն, զի և առաջին տեղի բնակութեան սրբոյն պատուեսցի 'ի փառս Աստուծոյ։ Եւ յայտնի ոչ իշխէր մերձենալ և առնուլ մասն ինչ 'ի նշխարացն վասն բնակչաց աշխարհին և նախապետին Ռշտունեաց։ Ապա գողանայր ըզբժշկութիւնն, որպէս կիներն որ յաւետարանն պատմի, հատեալ ըզգլուխն և զձեռնն փախստեայ յաշխարհն իւր անկանէր, և աղաղակ մեծ յաղագս այնորիկ լինէր. բայց 'ի վերին տեսչութենէ շնորհացն խաղաղանայր. զի այնպէս հաճեցաւ Աստուած թէ և առաջին տեղի բնակութեան սրբոյն պատուեսցի։ Եւ բերեալ զնշխարս երանելւոյն շինէր վկայարան մերձ 'ի յայրն ուր էր առաջին բնակութիւնն, և յորդորէր պատուելով զտեղին առաւել քան զառաւել յորում էր վախճանեալ, յորում երեւեցան շնորհք մարգարէութեանն Քրիս-

տոսի 'ի ձեռն սրբոյ Հգնաւորին 'ի նմին տեղւոջ, և ընկալեալ բժշկու-թիւն ըստ իւրաքանչիւր ցաւոց և որք նեղեալ էին յայսոց պղծոց. և ամենեքեան տային օրհնութիւն Աստուծոյ, և ասն մեծ աւանդէին զոր կատարման երանելւոյն 'ի փառս և 'ի գովութիւն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ այժմ և յաւիտեանս։

ՑԻՇԱՏԱԿ

ՍՈՒՐԲ

ՀՕՐՆ ԹԱԹԼՈՅ

ՎԱՐՈՍԻ ԵՒ ԹՈՎՄԱՍՈՒ

ՍՈՒՐԲ աշակերտք էին սուրբ հայրապետացն Սահակայ և Մեսրոպայ և հետեւողք վարուց նոցա։ Եւ յետ կատարման սրբոց Վարդանանցն, եկեալ սուրբն Թաթուլ, և աւագ եղբայրն իւր Վարոս 'ի սահմանս Գաբեղենից՝ մերձ գեւղաքաղաքին Կաղզուանայ, և ժողովեցան 'ի Վիշապաձոր կոչեցեալ տեղի 'ի մէջ անհուն քարանձաւացն, յորում աղդի աղդի գազանք և վիշապք ոլորեալ էին. ոլք հալածեցան անտի աղօթիւք սրբոցն. և ոլք մնացին գազանք 'ի ձորն, խաղաղու-

թիւն ստացեալ առ մարդիկ և առ անհաստուն աղօթիւք սրբոցն մինչեւ ցայսօր։ Արդ կեցեալ սրբոցն մրգօք և բանջարօք շատանային, և որպէս թէ յԱստուծոյ իսկ պատրաստեալ զտեղին 'ի բնակութիւն իւրեանց համարէին սուրբքն. և զսրբանուէր աղօթս իւրեանց հանապազորդ ըստ անմարմնոցն յերկինս առաքէին։ Պատարագ բանաւոր, զոհ անմարմին, ողջակէզ անկիզելի, ընծայ բանաւոր, զենումն անվախճան. անուշահոտ քան զխունկս ստուերին. վերնագոյն քան զօրինականն, և պատուական քան զխոյս և զզուարակս, և զբիւրաւորս գառանց պարարտից։

Եւ կեցեալ ժամանակս ինչ միայն Վարոս եղբարքն թաքուցեալ, և ստուգիւ ոչ ունիմ ասել թէ որքան. բայց վասն առաւել սիրոյն Աստուծոյ յայլ տեղի Վարոս որոշեալ 'ի թաքելոյ բնակէր 'ի զատ 'ի միմեանց երկուցն կամաւ. զի դիժուարակռիւ լիցի մենամարտիցն պատերազմն ընդդէմ դիւացն, և զի առաւել վարձուց արժանացին 'ի

տեառնէ, և այլ զի սփոփանքն 'ի միմեանց հատցին, և յԱստուծոյ լի-
ցին մխիթարեալք միշտ։ Որ եւս առաւել յարուցանէր զսատե-
ղարարն յառանձնականն հակառա-
կորդն արդարութեան. և նոքա ա-
ռաւել քաջապէս արիացեալ յաղ-
թէին մեծամարտութեամբն, և առ-
նուին զօրութիւն 'ի վերին շնոր-
հացն, և տեսութիւնս անձառելիս.
մինչ զի զմեծին և զերանելւոյն Ան-
տոնի զառաքինութիւնն յինքեանս
բերելով, հանապազ մարտ եդեալ
ընդ դիւացն կռուէին և յաղթէին,
և զհատուցումն բարի 'ի Քրիստոսէ
ընդունէին։ Մինչ զի խաւար մե-
ղացն բնաւ ոչ կարաց հասանել
լուսաւոր կարգաց և կրօնից սրբոցն.
և այսպէս կրօնաւորեալ բազում
ժամանակս անյայտ 'ի մարդկանէ,
և ապա յետոյ յայտնեցաւ յորսորդ-
աց սուրբն Թաղեուս. և համբաւն
հռչակեալ ընդ գաւառս աշխարհին, որ փութով մարդիկ անդր
հասանէին 'ի տեղիս սուրբ ճգնաւորին Թաղեայ։ Եւ անդէն վաղ-

վաղակի հիմնարկեալ շինեցին եկե-
ղեցի, և խուցս Ճգնաւորաց պատ-
շաճաւոր, և արարին վանս միաբա-
նակեցաց, որ մինչեւ ցայսօր կոչի
Թաթլոյ վանք։

Եւ ոմն յԵղբարցն որ Ժողովեցան
առ նա, յարեցաւ 'ի սուրբն Թա-
թուլ, որ սպասաւորէր նմա և ոչ
մեկնէր 'ի նմանէ, յոյժ բարեսէր աս-
տուածասաստ, և երկեւղած, հեզ
և խոնարհ, և հնազանդ ամենեցուն
յամենայն իրս՝ որոյ անուն էր Թու-
մաս։ Նա լինէր հեռեւող մեծին
Թաթլոյ՝ կարգաց և կրօնից խստամ-
բերութեան. և տեսեալ զառա-
ջադիմութիւնն Թումասու սուրբն
Թաթուլ, հաստատեաց զնա առաջ-
նորդ վանացն 'ի տեղի իւր, և ինքն
գնաց 'ի տեղին որ Մայրուձոր կո-
չեն. և անդ որպէս զանմարմին զա-
ռանձնական հանդէսն իւր կատա-
րէր. և հասեալ 'ի բարիոք ծերու-
թիւն փոխեցաւ յաշխարհէս 'ի նոյն
մենարանին Մայրոյ ձորոյ։ Եւ ան-
տի բարձին զսուրբ մարմինն երա-
նելւոյն և տարեալ 'ի վանան հան-

գուցին ըստ արժանեացն մեծաւ պատուով։ Իսկ թումաս մեծաւ ճգնութեամբ կեցեալ ըստ խրատու և վարուց սուրբ հօրն թաթ-ղոյ, և յետ ամաց ինչ և նա վախճանեցաւ նոյն բարի վարուքն, և եդաւ մերձ սուրբ հօրն թաթղոյ։

Իսկ սուրբն Վարոս երթեց եղբայրն թաթղոյ որ յետոյ Գիւտ կոչեցաւ, բնակեցաւ յանձաւս լերինս որ կոչի Գիցմայրի, խոտաբուտ եղեալ և վայրի մրգօք շատանայր ժամանակս բազումս. մինչեւ գտեալ զնա ալք ոմանք ըստ խնամոցն Աստուծոյ, և խնդութեամբ լցեալ՝ անուանեցին զնա Գիւտ. այլ և զտեղի նորա շինեցին վանք, որ մինչեւ յայսօր կոչի Գիւտի վանք. որ և անդ եւս բազմացան կրօնաւորք և փառաբանիչք Աստուծոյ։ Եւ նա եւս հասեալ 'ի բարուք ծերութեան փոխեցաւ յաշխարհէս յանանց և յանզբաւ կեանս 'ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ։

ՍՈՒՐԲ ՀԱՅՐՆ ԹԱԹՈՒԼ

ԱՌԱՋՆՈՐԴ ԿԱՑՈՑՑ

ՋԹՈՒՄԱՍ ԱՀԱԿԵՐՏՆ ԻՒՐ

ՎԱՆԱՑ ԻՒՐՈՑ

ԵՒ ԽՐԱՏ ԵՏՆՄԱ

ՋԱՑՍ ԲԱՆՍ

ՈՐԴԵԱԿ իմ թո�մաս, այսօր կո-
չեաց զքեզ Հոգին սուրբ յառաջ-
նորդութիւն եղբարց քոց. արդ
երկայն.ամիտ լեր և ողորմած ըստ
նմանութեան Հօրն երկնաւորի, զի
շահել կարասցես զեղբարսդ քո և
դու պսակիս 'ի Քրիստոսէ, որպէս
յանուանդ ես կոչեցեալ, նոյնպէս և
'ի գործդ լեր: Լուր սուրբ առա-
քելոյն Պաւղոսի 'ի խրատել զաշա-
կերտն իւր ասէր. ամենեցուն
հիւանդութեամբ ինքն վշտանայր,
և որպէս հրով այրեր դառնա-
կակիծ աղէտիւ: Աշակերտ ես եր-
կնաւոր Հօրն, նման լեր նմա: Հայր
հասարակաց ես, և 'ի գործոյն մի
վերջանայր: Ամենայն բարեձեւու-
թեանց օրինակ զքեզ ցոյց եղ-
բարցն. վարդապետութեամբ խրա-
տեա, սիրով մխիթարեա, յուսով

դարմանեա. վարդապետին վկայ՝ գործքն է, և առաջնորդին՝ հաստատութիւնն։ Հաստատ կաց և երկայնամիտ լեր ամենայն սխալանաց եղբարցն՝ 'ի բանս և 'ի գործս։ Բայց կամապաշտիցն ամենեւին մի անտար, և ոչ սակաւ մի, զի օտար է 'ի մարմնոյն Քրիստոսի, և չէ 'ի գործ Աստուծոյ եկեալ։ Որդեակ, զոր ինչ յեղբարցն պահանջես՝ զայն 'ի քեզ ցոյց։ Սակաւ խօսեաց և յոլով արդիւնացո, քարոզ՝ ըզգործքդ ցոյց։ Առաջնորդն ծնող է և բժիշկ, և հիւանդացեալն կարօտ է սիրոյ և առողջութեան։ Որդեակ, որ սխալէ և չէ իւր սովորութիւն՝ մի պատժեր. զմանկագոյնսն 'ի հնազանդութիւն կրթեա և յաշխատութիւն. զծերսն 'ի սաղմոսերգութիւն և 'ի ձեռագործս. և 'ի բանս խրատու առ մանկագոյնսն։ Հոգեւոր առաջնորդն աստուածային հուր է լուսաւորիչ մաքրիչ և ջերուցիչ. զապականարար ախտն այրէ, զդիջութիւնն ցամաքեցուցանէ, կրօնաւորական հանդիսիւ քննէ

և որպէս զոսկի 'ի բովս՝ անապատ սրբութեամբ զեղբարան Աստուծոյ ընծայէ, և ինքն թագաւորէ 'ի վերոյ տան. քաղաքաց. հոգեւոր ցաւակցութեամբն բժշկէ։ Միս և գինի կրօնաւորաց ոչ է ուտելի, այլ ճաշակելի է որոյ պէտք են։ Որ յախտ հիւանդութեան անկանի՝ ըզբնական կարգն թողացո, և զսովորական դարմանն ըստ պիտոյից առատացո։ Յաւելորդին մի անսար՝ որ չէ մեր։ Պիտոյ է ժուժկալել որչափ հնար է, յուսով աղօթել, հաւատով աշխատել, գոհութեամբ ճաշակել։ Որդեակ, նզովս մի եղցէ 'ի բերանոյ քո. թէպէտ և եղբայր է կամ՝ որդի 'ի մի մահիճս մի ննջեսցեն։ Որ խէթ ունիցի 'ի մտի չէ պարտ աղօթել, ոչ ճաշակել և ոչ ննջել։ Որ երդնու զոր չէ մեզ օրէն, արտաքոյ սրբութեանց լիցի ըստ չափոյ։ Մի խառներ ընդ խրատն բարկութիւն, զի մի ընկղմեսցի սխալեալ եղբայրն 'ի բարկութենէ խրատուն։ Աստուածասէրն իւր մտացն և խորհրդոցն և կամացն որպէս թըշ-

նամեռոյ զգուշանայ։ Որդեակ, յորժամ 'ի մահիճն քնոյ ելանես, այնպէս համարեա թէ 'ի գերեզման ելանես։ Հալածեա զկորհուրդս և զբանս, որք 'ի անոսիս ընթանան։ Բեւեռեա զքեզ յերկեւղն Աստուծոյ, և ած զմտաւ զերկեւղ դատաստանին. երկեւղիւ ննջեա, և զարթուցեալ՝ օրհնեա զԱստուած, և գոհացիր զԱստուծոյ, որ պահեաց զքեզ 'ի գիշերային խաւարասէր չարէն։ Փութացիր 'ի տեղի աղօթիցն, և ծնրադրեա երիցս անգամ, և աւելի. և ապա 'ի ծունկս անկեալ, և զերեսդ 'ի յերկիր եդեալ, հայցեա քեզ օգնութիւն յԱստուծոյ, և ապա սկսիր զկանոնեալ սաղմոսն։ Աղաչեա զԱստուած բանալ զբերանդ, և բարբառել զայն զոր սիրէ Աստուած։ Մի պղտորեր զկորհուրդս քո. մի ընդարձակեր զբանդ, մի թողացուցաներ զձեռսդ։ Մի դառնայր յարեւմուտս որ չէ քեզ սահման։ Մի պարարեր զանդ շըրջածութեամբ։ Զբոլոր զգայա-

բանդ պնդակազմ քաջութեամբ պնդեալ վառեա։ Այլ և զբուվանդակ եղբայրութիւնդ քաջալերութեամբ զինեա։ Քաջ է պատերազմ, և որք յաղթեն՝ պսակին։ Թոյլքն և անարիքն ոչ պատերազմին. ոչ յաղթեն և ոչ պսակին։ Որդեակ, իշխանութեամբ մի վարիր առ եղբարսն, և զոր դու ոչ կարես առնել, զայն յեղբարցն մի պահանջեր. զմի ոք միայն մի առաքեր 'ի վանացն 'ի բան, այլ երկու. զի վայէ զմինն 'ի Ճանապարհին. եթէ գլորեսցի ոմ կանգնեսցէ զնա. զի շատ ինաւք լինին միոյն։ Եղբայր որ որ ախտանայ հոգով թէպէտ և բազում բժշկութեան պէտս ունի՝ 'ի սրբութենէն միայն արդել. և այլ ամենայն կարդն ընդ եղբարսն լիցի։ Երկեւզածն 'ի սիրոյն առաւել պատկառի քան 'ի պատուհասէն։ Զգեսան որպէս և հանդիպի. և ջանին որ զվանդան բառնայ։ Զոր դու յեղբարցն պահանջես, ծերոցն զնոյն հատո. զի մի յանկանիցես յերկնաւոր շնորհացն զկամդ քո

պաշտելով։ Զպատարագին աղօթան և զերեկոյինն՝ պարապեցո զձեռագ-
քո յաշխատութենէ։ Որ գոհու-
թեամբ աշխատին՝ արժանի են
սուրբ խորհրդեանն. և տրանջողն
քնաւ իսկ ոչ։ Որդեակ, յորժամ
եղբայր քո ստահակեսցի, մի ան-
վոյթ առներ զնորա կորստեամբն։
Համբերեա նորա չար վարուցն և
առելի գործոցն. որպէս և քո
պարզ հոգիդ ախտակից մարմնոյդ
լինի։ Մի բաւական համարիր զհամ-
բերելն, այլ ձեռն տուր և ջանա
յարուցանել զնա, և յաղօթելն ար-
տասուեա վասն նորա։ Ստահեմ
'ի հոգին սուրբ, որ առատացոյց յա-
ռաքեալսն զշնորհսն իւր, նոյնպէս
և 'ի քեզ հեղցէ. զի և դու զգործս
տեառն գործեսցես։ Ընդ հեռի 'ի
միմեանց, այլ հանապազ տեսանելիք
զմիմեանս. և Աստուած զմեզ տե-
սանէ և զեղբարսդ ամենայն։ Եւ
զոր պակասութիւն գիտես 'ի քեզ՝
զայն հնազանդութիւնն լնու։ Զի
զՀանապարհս որ ընդ աջմէն գիտէ
տէր և Ճանաչէ. երթ, և տէր եղիցի

ընդ քեզ։ Զոր ասացի քեզ, որ-
դեակ, համառօտ բանիւ աւարտեմ։
Զսէր և զերկայնմտութիւն բնու-
թիւն սրա քեզ, և զերկեւղն Աս-
տուծոյ գործակից. և զամենայն ա-
ռաքինութիւն դիւրաւ կատարես։

Զայս խրատ առեալ երանելին
Թումաս 'ի սուրբ հօրէն Թաթղոյ
'ի յանապատին, և գնացեալ 'ի
վանս իւր՝ ամենայն բարեձեւու-
թեամբ զարդարէր զմիաբանս սուրբ
ուխտին, բնակեցուցանելով 'ի նմա
զբազմութիւն եղբարց միաբանից։
Եւ կեցեալ ինքն հրեշտակակրօն
վարուք ամս բազումս, և հասեալ
'ի բարւոք ծերութիւն, և խաղա-
ղութեամբ հանգեաւ 'ի Քրիստոս։

Ց Ա Ն Կ

ԺԱ. ՀԱՏՈՐՈՑ

Պատմութիւն վարուց Երանելւոյ սուրբ վարդապետին Մեսրովբայ 5
Պատմութիւն սրբոյն Եղիշէի վարդապետի 39
Յիշատակ սուրբ հօրն Թաթլոյ, Վարոսի և Թովմասու 47
Բանք խրատու հօրն Թաթլոյ աշակերտին իւրում Թովմասու 53